

## Հրանուշ ՉԱԼՅԱՆ

### ԲԱՅԱԾԱՆՑՈՒՄԸ ԿՐԿՆԱՍԵՆՈՒԹՅԱՆ ՉԵՁՈՔԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Բայի սեռային պատկանելության մեջ կատարված տեղաշարժերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժամանակակից հայերենում կրկնասեռ բայերի թիվը խիստ սահմանափակ է բայական հարուստ բառապաշարի՝ մեծ թիվ կազմող միասեռ բայերի հանդեպ: Հայերենի զարգացման հին և միջին շրջաններում կրկնասեռ և սեռային զուգահեռություն ունեցող 900-ից ավելի բայերի գերակշռող մեծամասնությունը մինչև արդի հայերենի բառապաշար մուտք գործելը կորցրել է կրկնասեռությունը: Սեռային փոխանցումները կատարվել են երկու ուղղություններով՝

ա) կրկնասեռությունից և սեռային զուգահեռությունից՝ չեզոք սեռ,

բ) կրկնասեռությունից և սեռային զուգահեռությունից՝ ներգործական սեռ:

Լեզվի պատմական զարգացման ընթացքում կատարվող սեռային տեղաշարժերի ժամանակ կրկնասեռ բայերը կան կորցրել են գրաբարում առանձին սեռային նշանակությամբ արտահայտվող բառիմաստ/ներ/ը, կան վերջին/ներ/ս արտահայտել են նոր բառաձևով: Բառաձևի անջատումը սովորաբար պայմանավորված է նույնարմատ ածանցավոր բայի զուգահեռ գործածությամբ: Որպես կանոն՝ ածանցավոր բայն արդեն կրկնասեռ չէ, ինչը, բայածանցների ակտիվ գործածության շնորհիվ, խթանում է կրկնասեռ բայերի իմաստային դաշտի բեռնաթափումը:

Երբ խոսում ենք կրկնասեռությունից չեզոք սեռ անցման մասին, «բայածանց» ասելով՝ ի նկատի ունենք գրաբարյան «ուցան» ածանցը, որը պայմանավորում էր բայի անցողիկության հատկանիշը: Օրինակ՝ *խավարել* (խաւարել) կրկնասեռ բայը գրաբարում նշանակում է 1.խավարով պատվել, խավար դառնալ, լույսից զրկվել, մթնել: 2.Լույս չտալ, խավարի մեջ սուզվել: 3.փխբ. Աղոտանալ, նսեմանալ, մթագնել: 4.փխբ. կուրացնել. (ՆՀԲ,Ա,934,ԳԲ,Ա, 563,ՀԲԲ,Բ,252): Նույն բայի ներգործական սեռի նշանակությունները լիովին համընկնում են առանձին գործածվող *խաւարեցուցանել* բայի իմաստներին՝ «խավար դարձնել», «մթնեցնել», «կուրացնել» և այլն: Ակնհայտ է, որ այս իրողության պատճառով «խավարել» կրկնասեռ բայի ներգործական սեռը պայմանավորող իմաստները գործառական ոլորտի նեղացում են ապրում և մոռացության են մատնվում (ԱՀԲԲ,Ա,569):

*Տեղեկանալ* կրկնասեռ բայը գրաբարում գործածվում է *տեղեկացուցանել* բայի հետ (ՆՀԲ,Բ,864,ԳԲ,Բ,553,ՀԲԲ,Դ,399): Կրկնասեռությունը պայմանավորող նշանակություններն են 1.Տեղյակ դառնալ, տեղեկություն առնել, ծանոթանալ մի բանի, իմանալ: 2.Հմտանալ, վերահասու լինել, ստույգ սովորել: Համեմատենք պատճառական բառի իմաստների հետ՝ 1.Տեղյակ դարձնել, ծանոթացնել: 2.Տեղյակ պահել, իմաց տալ, հաղորդակից դարձնել, հայտնել:

Ժամանակակից հայերենի բառապաշարում բայի իմաստային դաշտից դուրս են մնացել «հմտանալ», «վերահասու լինել», «ստուգել», «սովորել» նշանակությունները, ինչի հետևանքով բայը կորցրել է թե՛ կրկնասեռությունը, թե՛ արդի լեզվամտածողությանը բուն իմաստի հետ թույլ կապ ունեցող նշանակությունները (ԱՀԲԲ,Բ,1432):

*Արշավել* բայը գրաբարում ունի սեռային զուգահեռություն՝ չր՝-գնալ, վազել, հարձակվել, ասպատակել, նր՝- արշավեցնել /ՆՀԲ,Ա,370,ԳԲ,Ա218,ՀԲԲ,Ա,277/: Հենց գրաբարում առանձին գործածություն ունի *արշաւեցուցանել* ածանցավոր բայը: Պարզ տրամաբանությամբ այս պարագայում բայը կորցնելու էր ներգործական սեռի զուգահեռությունը: Նույնը պետք է ասել *լռել*, *մոտենալ*, *ցամաքել*, *փայլել*, *հաճել*, *անզատակել* և սեռային զուգահեռություն ունեցող *արտափայլել*, *բանդագուշել*, *ճգնել*, *ճեպել* պատ-

*կատել* ու բազմաթիվ այլ կրկնաստեղծության մասին, որոնք գրաբարում ունեցել են - *ուցան* ածանցով զուգահեռաբար գործածվող տարբերակ: Վերջինիս նշանակությունները, ինչպես նշեցինք, համընկել են կրկնաստեղծության ներգործական սեռի իմաստներին: Սեռային փոխանցումների արդյունքում արդի հայերենի բառապաշար մուտք են գործել չեզոք սեռի պարզ և ներգործական սեռի ածանցավոր բայերը:

Շատ դեպքերում նշված իմաստափոխության հետ մեկտեղ բայը կորցրել է նաև չեզոք սեռի որոշ իմաստներ, որոնց կապը բայի հիմնական նշանակության հետ /արդի լեզվամտածողությանը/ չափազանց թույլ է եղել, ինչպես, օրինակ, *ճզնել* բայի՝ «նահատակվել, մրցել», ճեպել բայի՝ «ստիպվել», «հարկադրվել», «հոգ տանել», «ճիգ գործադրել», *պատկատել* բայի՝ «գուշանալ», «ուշադիր լինել» իմաստները և այլն:

Գրաբարում բավական մեծ թիվ են կազմում զուգահեռաբար Ե և Ի լծորդություններին պատկանող բայերը, որոնք արտահայտել են և՛ ներգործական և՛ չեզոք սեռի նշանակություն (երկարել/երկարիլ, մարել/մարիլ, խամրել/խամրիլ, խռվել/խռվիլ և այլն): Ի լծորդության վերացման հետևանքով այս բայերն այժմ հանդես են գալիս միայն մեկ ձևով՝ Ե լծորդությամբ: Դրանց մի մասը պահպանում է կրկնաստեղծությունը, շարունակում է գործածվել և՛ որպես ներգործական, և՛ որպես չեզոք սեռի բայ, սակայն ավելի սովոր խումբն անցել է միաստեղծության: Քննարկենք սեռային փոխանցման երկրորդ՝ սեռային զուգահեռությունից ներգործական սեռ ուղղությունը:

Ինչպես գիտենք, գրաբարում կրավորական և ներգործական սեռի շատ բայեր ունենին ընդհանուր վերջավորություններ: Այս կարգի բայերի սեռը որոշվում էր համատեքստի մեջ, այսինքն՝ բայիմաստով: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ գրաբարում բայասեռերը որոշելու ձևական հատկանիշներն արդեն կորցրել էին իրենց սկզբնական իմաստները: Հայոց լեզվի զարգացման ավելի վաղ շրջանում բայասեռերն ունեցել են իրենց ձևական արտահայտությունները՝ ներգործական և կրավորական իմաստ ունեցող ածանցները, որոնց կորստի հետևանքով էլ, ինչպես նշեցինք, բայի սեռի քերականական կարգի դրսևորման մեջ վճռական դեր սկսել է կատարել բայիմաստը:

Հայոց լեզվի զարգացման ընթացքում այդ անորոշությունը վերանում է, և ստեղծվում է կրավորական իմաստ արտահայտող նոր՝ *վ* ածանցը, որով որոշվում է կրավորակերպ խոնարհումը, և տարբերվում են ներգործական և կրավորական սեռի բայերը: Այդ ածանցն առաջանալուց հետո հայոց լեզվի բայասեռի դրսևորման մեջ առաջատարը դառնում է ձևական հատկանիշը: Ներգործական սեռի բայերը արդի հայերենում ընդունում են *վ* ածանցը և վերածվում կրավորականի:

Այսպիսով, սեռային զուգահեռությունից ներգործական սեռ անցում կատարած բայերը, եթե արդի հայերենում պահպանում են չեզոք սեռի նշանակությունը, ապա այն արդեն արտահայտում են *վ* ածանցի միջոցով. Օրինակ՝ *Քաջալերել* բայը գրաբարում ունի սեռային զուգահեռություն (ՆՀԲ,Բ,983, ԳԲ,Բ,623,ՀԲԲ,Դ,551). *Քաջալերեն*- նր.-1. Սիրտ տալ, խրախուսել, հորդորել, մխիթարել: *Քաջալերիմ*-չբ. -1.Մտապնդվել, համարձակություն ստանալ, արիանալ: Արդի հայերենում «քաջալերել» բայը նր է՝ 1. Սիրտ տալ, 2. խրախուսել, 3. քաջալերիչ դիրք բռնել, 4. Հավանություն տալ իմաստներով: Կրավորական, ինչպես նաև չեզոք սեռի համար ժամանակակից հայերենում գործածվում է «քաջալերվել» բառաձևը՝ «խրախուսվել», «հավանություն ստանալ» նշանակություններով (ԱՀԲԲ,Բ, 1554): *Կազդուրել* բայը՝ նր-գորացնել, ուժեղացնել, ոտքի կանգնեցնել, *կազդուրիմ*-չբ-գորանալ, ուժեղանալ, քաջալերվել (ՆՀԲ,Ա,1030,ԳԲ,Ա,618, ՀԲԲ,Բ,359): Արդի հայերենում «կազդուրել» բայը ներգործական սեռի է՝ 1. Առողջությունը վերականգնել, 2. Ապաքինել,գորություն տալ, 3. փխբ. Հոգեպես ամրացնել, քաջալերել իմաստներով: «Կազդուրվել» բայն (կբ., չբ.) ունի «ապաքինվել», «քաջալերվել» նշանակությունները (ԱՀԲԲ,Ա,666):

Այս բառախմբի մեջ են մտնում *այլայլել, ալեկոծել, ուղևորվել, տատանել, ընդմիջել, լքել, մրրկել* և այլ բայեր, երբ բայիմաստը չի փոփոխվում, իսկ գործողության բնույթի փոփոխման դեպքում *վ* ածանցի միջոցով արտահայտվում է չեզոք սեռի գաղափար: Քերականական ձևի և իմաստի համապատասխանության համաբանությանը հինհայերենյան շատ բայեր սեռային զուգահեռությունից միաստեղծության անցնելիս ևս կորցնում են նաև այն բայիմաստները, որոնք արդիհայերենյան լեզվամտածողությամբ չի կարող գտնվել տվյալ բայի իմաստային դաշտում:

*Խրախուսել* բայի ներգործական սեռի նշանակություններն են՝ 1.Քաջալերել, սրտապնդել, չեզոք սեռինը՝ 1.Խրախույսի ձայն բարձրացնել, խրոխտաբար գոչել, խիզախել: 2. Քաջալերվել, վստահել, ապավինել, ուրախ սրտով հուսալ (ՆՀԲ, Ա, 991, ԳԲ, Ա, 595, ՀԲԲ, Բ, 308): Արդի հայերենում *խրախուսել* բայն ունի «քաջալերել», «ռզեշնչել», իսկ *խրախուսվելը*՝ «քաջալերվել», «ռզեշնչվել» նշանակությունները (ԱՀԲԲ, Ա, 613): Ինչպես տեսնում ենք, գրաբարյան շատ նշանակություններ բայը կորցրել է, ինչի հետևանքով բայի ներգործական և չեզոք սեռի իմաստները որևէ այլ առումով չեն տարբերակվել: *Հաղորդել* բայը ներգործական սեռի նշանակություններն են 1. Հաղորդակից դարձնել: 2. Հաղորդություն տալ, իսկ *հաղորդիմ* չեզոք սեռ բայի նշանակությունները՝ 1. Հաղորդակից լինել, հաղորդակցվել: 2. Ձուգավորվել: 3. (եկեղ.) Հաղորդություն ստանալ (ՆՀԲ, Բ, 9, ԳԲ, Բ, 16, ՀԲԲ, Գ, 18): Արդի հայերենում բայը ձեռք է բերել բազմաթիվ նոր իմաստներ՝ 1.Իրագրել, տեղեկացնել: 2. Հայտնել, հայտարարել: 3. Վերապատմել: 4. Ասել, մատնել: 5. Տալ, օժտել մի բանով: 6. Եթերում տարածել: 7. Շարժումը փոխանցել մի բանի: 8. Փոխադրել (հոսանքը): 9. (եկեղ.) Հաղորդություն տալ (ԱՀԲԲ, Ա, 736): Այս բազմիմաստության մեջ տեղ չի գտել գրաբարյան «զուգավորվել» նշանակությունը: Նույնը պետք է ասել *նահատակել* բայի գրաբարյան «մրցել», «մրցակցել» (ՆՀԲ, Բ, 403 ԳԲ, Բ, 269, ՀԲԲ, Գ, 439), *գայթակղել* բայի՝ «փախչելով ապաստանել» (ՆՀԲ, Ա, 526, ԳԲ, Ա, 307) նշանակությունների մասին և այլն:

Այսպիսով, այն բայերը, որոնց նր. և չր. իմաստներն ըստ էության չեն տարբերակվել (օրինակ՝ *ալեկոծել, մրրկել, հաստատել...*), արդի հայերենում գրաբարյան Ի լծորդի փոխարեն ստանում են *վ* ածանցը, իսկ այն բայերը, որոնք ունեն բուն բայիմաստի հետ թույլ կապ ունեցող նշանակություններ, համաբանության ուժով կորցնում են դրանք, որպեսզի բայի իմաստային դաշտում ակնբախ տարբերակում չառաջանա: Գրաբարում կան բազմաթիվ բայեր, որոնք սեռային զուգահեռությամբ արտահայտել են միանգամայն այլ իմաստներ: Այս բայերն իհարկե չէին կարող խուսափել Ե-Ի լծորդությունների պատմական միավորումից: Հետաքրքիր է այս բայերի ներգործական սեռ կատարած անցումը: *Խանձել* բայի գրաբարյան իմաստներն են՝ -նր. - 1.Այրել: 2. Տաքությանը կիզել: 3. Խարանել: *Խանձիմ* - չր. -1. Սաստիկ փափագել մի բան, տոփալ: 2.Մի վատ բան սովորել (ՆՀԲ, Ա, 921, ԳԲ, Ա, 554, ՀԲԲ, Բ, 239):

Արդի հայերենում *խանձել* ներգործական բայն ունի 1. Առարկայի մակերևույթը թեթևակի այրել: 2. Առարկայի վրայի խավը այրել: 3. Չհնձած խոտը այրել: 4. Կիզել: 5. Ձերմությամբ չորացնել: 6. Արևահար անել: 7. (փխբ.) Հոգեկան ցավ պատճառել: 8. (փխբ.) Կարոտով տոչորել նշանակությունները (ԱՀԲԲ, Ա, 562): Հենց այս բառիմաստները *վ* ածանցի օգնությամբ արտահայտում են թե՛ կրավորական, թե՛ չեզոք սեռի իմաստներ. «այրվել», «կիզվել», «խանձվել», «տոչորվել», «արևահար լինել» և այլն: Ինչպես տեսնում ենք, գրաբարյան չեզոք սեռի նշանակությունները չեն պահպանվել: *Վանել* բայը գրաբարում ունի նր. - 1. Քշել, վնդել, հեռացնել, չր. - Կովել, պայքարել իմաստները (ՆՀԲ, Բ, 783, ԳԲ, Բ, 501, ՀԲԲ, Գ, 299): Արդի հայերենում բայը կորցրել է չեզոք սեռի իմաստները. «վանվել» բայն ունի «վնդվել», «արտաքավել» նշանակությունները, այսինքն՝ նույն ներգործական սեռի հիմնական իմաստները՝ *վ*

ածանցով (ԱՀԲԲ,Բ,1358): *Դյուբել* բայը կորցրել է գրաբարյան «գուշակություն անել» չեզոք սեռի նշանակությունը (ՆՀԲ,Ա,629,ԳԲ,Ա,373,ՀԲԲ,Ա,525,ԱՀԲԲ,Ա,304/, *ողող (ան)ել* բայը արդի հայերենում բազմիմաստ է, բայց կորցրել է գրաբարյան «լացուկոժ անել», «ողբալ» իմաստները (ԱՀԲԲ,Բ,1132), *գումարել* սեռային զուգահեռություն ունեցող բայն էլ կորցրել է չեզոք սեռի 1. Կռվի գումարվել, կռվել, բախվել: 2. Կուչ գալ: 3.Շփոթված մնալ իմաստները (ՆՀԲ,Ա,579,ԳԲ,Ա,340,ՀԲԲ,Ա,468) և այլն:

Փաստերը վկայում են, որ հայերենի պատմական զարգացման ընթացքում կատարված սեռային փոխանցումները ոչ միայն քերականական իմաստն ու այդ իմաստի դրսևորման միջոցները՝ ձևային արտահայտությունները սերտորեն առնչակցել են միմյանց հետ, այլև որոշակի համակարգման են ենթարկել բայիմաստները: Անկախ ցույց տված գործողության բնույթից՝ ցանկացած բայ ունի որոշակի իմաստային դաշտ, որը փոփոխության է ենթարկվում տվյալ լեզվով խոսող հանրության լեզվամտածողության փոփոխության հետ: Գրաբարի համեմատությամբ արդի հայերենում քերականական ձևի և իմաստի համապատասխանեցման ուժեղ միտում է նկատվում, ինչի հետևանքով քերականական մեմարժեքության (տվյալ դեպքում՝ միասեռության) անցած բայերը կորցնում են բայի գլխավոր իմաստի հետ թույլ կապ ունեցող նշանակությունները: Եթե բայը ներգործական սեռի է, ապա *վ* ածանցով կարող է վերածվել կրավորական, որոշ դեպքերում նաև՝ չեզոք սեռի բայի: Այս պարագայում տարբերակիչ դեր է ստանձնում ձևական հատկանիշը՝ ածանցը, և ոչ թե միանգամայն այլ, բայի գլխավոր իմաստից զգալիորեն տարբերվող նշանակությունը:

Այսպիսով, գրաբարի քերականական համակարգում շատ են կրկնասեռ բայերը, որոնք բառարանային մեկ բառույթի մեջ համատեղում են քերականական երկու սեռի գաղափար: Մեծ թիվ են կազմում նաև սեռային զուգահեռություն ունեցող բայերը, որոնք երկրորդ քերականական սեռի գաղափարն արտահայտում են լծորդի փոփոխմամբ: Հետաքրքիր է, որ գրաբարում հաճախ կողք կողքի գործածվում են թե՛ կրկնասեռ, թե՛ նույնարմատ միասեռ ածանցավոր բայերը: Այս բայերի ձևի և իմաստների մեջ կատարված փոփոխությունները գրաբարից արդի հայերեն անցնելու ճանապարհին բերում են քերականական մեմարժեքության: Կրկնասեռությունից և սեռային զուգահեռությունից միասեռության անցմանն օժանդակել են բայաժանցները, մասնավորապես՝ կրկնասեռությունից չեզոք սեռ անցման պարագայում *ուցան* ածանցը, իսկ կրկնասեռությունից ներգործական սեռ անցման պարագայում՝ *վ* ածանցը:

#### ՀԱՄԱՈՒՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԱՀԲԲ - Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ.,հ. 1,2, Եր., 1976:
2. ԳԲ - Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան, Եր., 2000:
3. ԳԲԲ- Լ. Խաչատրյան, Գրաբարի բացատրական բառարան, Եր., 2003:
4. ՀԱԲ - Հ. Աճառյան, Հայերենի արմատական բառարան, հ.,հ.,Ա-Դ,Եր., 1971-1979:
5. ՀԲԲ - Մտ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Եր., 1944-1945:
6. ՄՀԲ - Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հ. Ա, 1987, հ. Բ, 1992, Եր.:
7. ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազենան լեզուի, հ. 1, 1979, հ. 2, 1981, Եր.:
8. չք- չեզոք սեռի բայ
9. նք-ներգործական սեռի բայ

---

**АФФИКСАЦИЯ – ФАКТОР ГРАММАТИКО-СМЫСЛОВОГО  
ИЗМЕНЕНИЯ ГЛАГОЛОВ***Резюме**Г.Закян*

В статье исследован параллелизм тех древнеармянских залоговых и двузалоговых глаголов, которые в результате аффиксации в современном армянском языке потеряли грамматическую разнозначимость. На процесс перехода двузалоговых глаголов в однозалоговые в большой мере оказали влияние глагольные аффиксы "նցիւի" и "վ".